

# Թ Ա Լ Ա Բ Ա Ն Ե Ր Ը

«Պարսից դպրոցները»\*) յօդուածում մենք կանդ առանք միայն երկու տիպի դպրոցների վրայ—մագրասաների և մուալիմանաների: Բայց այդ երկու կարգի կրթական հիմնարկութիւններից՝ Պարսկաստանում կան նաև ըարձր դպրոցներ, որոնք յայտնի են «թալարա» անունով: Թալարաները՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ Պարսկաստանի կրօնական համալսարաններն են, իսկ աշակերտներն էլ Պարսկաստանի ուսանողները: «Թալարա» նշանակում է միենոյն ժամանակ և ուսանող:

Պարսկաստանի այդ «բարձրագոյն դպրոցները» ոչ այլ ինչ են, եթէ ոչ մագրասաների շարունակութիւնը աւելի բարձր կուրսերով, աւելի շատ առարկաներով, բայց տիրապետող ոգին, որ ամենազլիսաւորն է, էլի նոյն նեղ կրօնականն է:

«Թալարաները»՝ ինչպէս ասացի՝ կրում են զուտ կրօնական բնաւորութիւն: Այդ հիմնարկութիւնների մէջ պատրաստում է Պարսկաստանի կղերական դասը:

Նոր չէ, ինչ Պարսկաստանում հիմնուել է թալարան: Դեռ շատ հին ժամանակներից, ամբողջ դարեր առաջ, եղել են այդ տիպի դպրոցներ: Ամեն մի փոքրիշատէ աչքի ընկնող քաղաք ունի մէկ կամ մի քանի «թալարա», իսկ մեծ քաղաքները, օր թեհրան, թաւրիդ, ունեն էլ աւելի շատ: Բոլոր թալարաների ծրագիրը համարեա միենոյնն է, միայն մի տեղ աւելի կանոնաւոր հիմունքների վրայ է դրուած, մի ուրիշ տեղ թոյլ, մի

\*) Տես «Մուլճ» № 5.

տեղ լաւ և պատրաստուած ուսուցիչներ կամ, հետեապէս լաւ էլ անցնում են դասընթացը, մի ուրիշ տեղ կաղում է այդ կողմից: Մի խօսքով հիմնական ծրագիրը ընդհանուր է բոլորի համար:

Այնտեղ անցնում են բոլոր այն գիտելիքները, որոնք անհըրաժեշտ են մի մոլլայի, մի սէյիդի համար: Թալաբաններում սովորեցնում են, թէ ինչպէս պէտք է նամազ անել, մեռել թաղել, այս կամ այն ժառանգութիւնը բաժանել, կարգադրել ըստ շարիաթի. այնտեղ անցնում են աստուածաբանութիւն, դուրանի մեխնութիւն, օրէնսդրութիւն (իհարկէ կրօնական): Բացի այդ՝ այնտեղ գասաւանդում են աստղաբաշխութիւն (հինը), մետափիզիկա, թալաբանութիւն, կրօնական ինդիրների մեխնութիւններ: Այս բոլոր առարկաները անցնում են արաբերէն լեզուով, որի վրայ շատ ուշագրութիւն է դարձնում այդ դպրոցների մէջ:

Ահա ինչով և ինչպիսի մթնոլորտի մէջ է խմորում ու մեծանում Պարսկաստանի քարձր կրթութիւն» առած երիտասարդութիւնը: Աւելացնենք և այս, որ բոլոր թալաբաններումն էլ գասաւանդում են կրօնական պետերը—մուշտէիդները, մոլլաները և այլն:

Երևակայեցէք մի մեծ և ընդարձակ բակ, դրա շուրջը շարուած փոքր և մեծ սենեակներ կամ խուցեր և գուշ կը ստանաք Պարսկաստանի բարձրագոյն գպլոցը: Ամեն մի սենեակում ապրում է մէկ կամ երկու թալաբա, իսկ ամբողջ գպլոցում մասաւորապէս 200—300 թալաբա:

Այդ տիպի գպլոցներ թաւրիզում կան թւով հինգը. յիշենք օրինակի համար «Թալաբիէ», «Սադղիէ», «Հաջի-Սլի-Ասկար» և այլն. կան աւելի պակաս թւով Խաչտում, Խապահանում, համարեա բոլոր գլխաւոր քաղաքներում, իսկ թեհրանում գըրանց թիւը համար է 10-ի, գեռ էլ աւելի շատ: Խոյն էլ ունի թալաբա, որը շատ հետաքրքիր է, և արժէ յատկապէս այդ թալաբայի մասին մի քանի խօսք ասել: Բայց այդ մասին մի փոքր յետոյ:

Պարսկական այս բարձրագոյն բոլոր գպլոցներումն էլ շակերտները սովորում են ձրիաբար և զիշերօթիկներ են, ոչ միայն ձրի են, այլ որոշ սոճիկ էլ են ստանում թէ մուշտէիզից և թէ ժողովրդից: Խեղճ ժողովուրդ: Եւ ինչո՞ւ. որովհետեւ թալաբանները (մեր խօսքը աշակերտների մասին է) խանգարում են ժողովրդի հանգիստը, որովհետեւ բարեհաճում են բոլորել և կուել լուսաւոր գաղափարների, նոր կարգերի գէմ: Թալաբանները՝ պէտք է այս էլ ասել, որ շատ մեծ գեր են խաղում Պարս-

կաստանի կերանքի մէջ, նրանք զօրեղ և յանդուգն բազոքովներն են, ցոյցեր և ըմբռաստութիւններ յարուցանողները, կատարում են համարեա նոյն դերը, ինչ ուրիշ պետութիւնների մէջ ուսանողները: Բայց իհարկէ միանգամայն հակառակ սկզբունքներով: Սյնտեղ, արտասահմանում ուսանողը հրապարակ է դուրս գալիս յանուն նոր, լուսաւոր մաքերի, իսկ այստեղ թալարան խաւարի պաշտպան է, այնտեղ ուսանողը աղմկում է յանուն ժողովրդի շահերի, իսկ այստեղ թալարան կուռում է կղերի օդտին, պաշտպանում է անարդարութիւնները. վերջապէս լուսաւոր է այնտեղ ուսանողը, իսկ այստեղ թալարան փանատիկ է, այդ բար ամենափիս և վատ մաքով վերցրած: Միշտ էլ թալարաններն են անցնում Պարսկաստանում յարուցուած ամբոխային ցոյցերի գլուխը, նրանք են գոգուում և ոտքի կանգնեցնում պարսիկ մոլեսանդ խուժանին, հէնց Թաւրիզում վերջերս կատարուած խանակութիւնների ինդրում ահագին դեր են խաղացել այնտեղի թալարանները: Նրանք են առաջին անգամ յարձակուել հայերի խանութների վրայ, քարուքանդ արել. նրանք են ստիպել ժողովրդին, որ հաւաքուեն, աղմուկ բարձրացնեն, թողնեն իրանց գործերը:

Եւ պէտք է ասել, որ այդ հիմնարկութիւնները շատ մեծ յարմարութիւններ են ներկայացնում ամբոխային ցոյցեր առաջացնելու: Բաւական մեծ թիւ են կազմում իւրաքանչիւր զըսլրոցում եղած թալարանները: հերիք է զրանք բոլորը միասին դուրս թափուեն, լցուեն բազարը, որ աղմուկ բարձրացնեն և աջողեցնեն կողակել տալ խանութները: Իսկ Պարսկաստանի ցոյցն էլ հէնց բազարը կողպելու մէջ է կայանում:

Սյսպէս են անա թալարանները. նրանք յետադէմ մաքերի, նախաջրհեղեղեան կարգերի և անշարժութեան մոլեսանդ պաշտպաններ և երկրպագուներ են: Սրանց ուսուցիչներ են մոլլաները կամ՝ թէն շատ քիչ տեղերում՝ մուշտէիդները: Դաստարւութիւնը դարսոցում չէ լինում, մէկ կամ մի բանիսը գնում են ուսուցչի մօտ, դաս առնում և նորից վերադառնում իրանց բնակրանը: Սյսպէս և միւսները: Աշակերտները զպրոցում ունենում են յաճախակի վիճարանութիւններ կրօնական այս կամ այն խնդրի մասին: Թալարանները հագնւում են համարեա մոլլայի նման: Դրանք են դասաւանդում փոքր թալարաններին, Թաւրիզի գի թալարանների ուսուցիչներն են մի քանի մոլլաներ, որոնք՝ ինչպէս պատմում է մի պարսիկ միրզա՝ բաւականին լաւ կըրթուած են և զիտեն այդ առարկանները և սովորել են նաջաֆիեալբահում մեծ մուշտէիդի մօտ:

Իւրաքանչիւր թալարա—զպրոց ունի իր տեսուչը (ուայիս):

Այդ ուայիսները կատարում են համարեա մեր վերակացուների պաշտօնը. նրանք են հակում աշակերտների վրայ, նրանք են աշակերտների պահանջները և ցանկութիւնները տեղ հասցնում, հետեւում են, որ աշակերտները անկարգութիւններ չանձն թալարանկրում, չը կուեն միմիանց հետ, սովորեն իրանց դասերը եացն: Այդ ուայիսներն էլ հպատակում և գտնուում են մուշտէիդի իրաւասութեան տակ, նրանց են հրամաններ և պատուէրներ ստանում դպրոցի վերաբերմամբ: Մուշտէիդը համարում է թալարանների դիրեկտորը, առ է ծրագիր տալիս, ուղղութիւն մտցնում դպրոցներում, դասերի մէջ փոփոխութիւն մտցնում և կարգադրում ամեն ինչ:

Ահա Պարսկաստանի բարձրագոյն գպրոցների—թալարանների պատկերը:

Բայց այժմ տեսնեաք, թէ ինչ բանի մէջ է կայանում Խոյի թալարայի առանձին հետաքրքրականութիւնը: Այս, շատ հետաքրքիր է այդ դպրոցը: Նա՝ կոչում է Մակվարա և ունի մօտ 200 աշակերտ: Այս թալարան ունի գանք, հսկ կողքին էլ մզկիթ: Բայց դեռ այդ չէ հետաքրքրականը: Մակվարան համարում է միենոյն ժամանակի և սրբատեղի, իսկ այդ թալարայի հետ կապուած են հազար տեսակ հրաշներ, և այժմ էլ կատարուում են նման հրաշագործութիւններ, որոնք ընդունուում են ժողովրդի կողմից ամենայն երկիւղածութեամբ, սրբութեամբ պահպանում և տարածուում ժողովրդի մէջ:

Ցիւնք այդ հրաշագործութիւններից երկուուր, այս երկու հատիկ փաստը շատ բնորոշ են և շատ բան կ'ասեն մեզ:

Շատ առաջ մէկ ուղտ, ինչպէս է լինում, դուրս է գալիս քարվանից, և պատահաբար մտնում Խոյի թալարան, երկի քարվանսարա կարծելով: Եւ պէտք է ասել, որ թալարանները միանգամայն նման են Պարսկաստանի քարվանսարաններին: Այս նկատում են թալարանները և իսկոյն յարձակում են ուղտի վրայ: Կարծում էք ծեծելու համար, ոչ: Նրանք փայփայում, համբուրում են ուղտին և հոչակում են սուրբ: Ինչու: Նա եկել է թալարա, սրբատեղին պատսպարուելու, նա էլ գիտէ, որ այս տեղը սուրբ է, նուիրական հրաշագործ: Եւ ահա թալարանները աղօթում են, կանչում: Խոնեւում է պարսիկ ամբոխը, իմանում եղելութիւնը, նրանք էլ են յարձակում ուղտի վրայ, ծունք զնում նրան, իրար առանց հերթ տալու փետում են կենդանու մաղերը և որպէս սրբութիւն տանում, պահում են:

Վերջերս էլ՝ ինչպէս պատմում են՝ թալարանները լուր են տարածում, որ այնտեղ բժշկուել է մի անդամալոյժ: Լուրը

իսկոյն համանում է ամենքին և աւետում սուրբ դործը՝ Բոլորն  
Էլ՝ իհարկէ՝ հաւատում են, քաղաքում կատարւում է հրավա-  
ռութիւն, ուրախանում են բոլորը, օրը տօնական բնաւորու-  
թիւն է կրում, և այսպիսով աւելի ու աւելի է բարձրանում թա-  
րապայի անունը ժողովրդի աչքում։ Ահա ինչ աստիճան փանա-  
տիկ է պարսիկ ժողովորդը։

Թալաբաները աւարտող աշակերտները կարող են լինել  
միայն մոլաներ կամ մոլաներից մի քիչ աւելի բարձր աստի-  
ճան կը ստանան, իսկ դրանցից աւելի մեծ պաշտօնեայ, օրինակ՝  
մուշտէիդ դառնալու համար նրանք պէտք է սովորեն նաև ա-  
մենագլխաւոր կրօնապետի մօտ, որը լինում է Նաջաֆ-Քեալ-  
բըլահում։ Սյունեան կրօնապետը՝ ինչպէս պատմում են՝ մի  
շատ ազդեցիկ, հեղինակաւոր մուշտէիդ է։ Նրա գերիշխանու-  
թիւնը տարածւում է նաև Հնդկաստանի, Բելուջաստանի և Աֆ-  
ղանստանի մահմեդականների վրայ և անպայման համակրանք  
է վայելում բոլորի կողմից էլ։ Նա մի հակայական ոյժ է ներ-  
կայացնում այս մահմեդական աշխարհներում, մի ոյժ, որ կա-  
րող է բուքէապէս ինչպէս կախարդական զաւագանով ցնցել  
ամբողջ իրանի երկիրը, յեղաշրջել ամեն ինչ և ուղի կանգնե-  
ցընել ամբողջ ազգաբնակութիւնը։

Ահա այդ անձնաւորութեան մօտ են ստանում իրանց  
վերջնական կրթութիւնը թալաբաները աւարտող աշակերտները։  
Բացի նրանից, գլխաւոր կրօնապետից, կան Նաջաֆ-Քեալբը-  
հումի՛ ուրիշ մուշտէիդներ, որոնք դասախոսում են։ Սյունեղի կրր-  
թական հիմնարկութիւնը, ամենք համալսարանը՝ կրում է լսա-  
րանի բնաւորութիւն։ ուսուցիչները կարդում են դասախոսու-  
թիւններ որոշ առարկաներից՝ ինչպէս աստղաբաշխութիւն,  
դորանի մեկնութիւն և այլն. նա կազմում է թալաբաների շարու-  
նակութիւն։ Սյունեղ սովորում են աշակերտները 5—6 տարի։  
Դրանք անպայման աւելի բարձր աստիճան են ստանում, քան  
հասարակ մոլաները, և նրանց իրաւունք է տրւում թալաբանե-  
րին դաս տալու։ Իսկ մուշտէիդի աստիճան ստանալու համար  
հարկաւոր է լինում առնուազն տասն տարի, դեռ էլ աւելի ժա-  
մանակամիջոց մնալու Քեալբահում։ Մուշտէիդի աստիճանը  
համապատասխանում է մօտաւորապէս մեր եպիսկոպոսութեան։  
Ամեն գաւառ և նահանգ, ուրիշ խօսքով ամեն մի թեմ ունի իր  
մուշտէիդը կամ առաջնորդը։ Այս մուշտէիդները նշանակւում  
են գլխաւորապէս կրօնապետի կողմից։

Բացի Նաջաֆ-Քեալբահից՝ կայ նման դպրոց նաև Խորա-  
սանում, որը մի վանք է և կոչւում է Իմամ-Իրզա։ Բայց

զերջինս անհամեմատ ցածր է, քան առաջինը, և այնուեղ  
աւարտողներին շատ քիչ է աջողւում ստանալ մուշտէիդի  
պաշտօն:

Ե. ՑՐԱՆԳԵԱՆ